ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

2021-2023
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԵՎ 2021
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

ՀՀ Լոռու մարզպետարանի գործունեությունն ուղղված է Լոռու մարզում կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսության և զբաղվածության բարձր մակարդակի ապահովմանը, արտագաղթի նվազեցմանը, ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարմանը:

Լոռու մարզպետարանը պետական կառավարման ծառայություններ է մատուցում մարզի տարածքում բնակվող ավելի քան 215.5 հազար բնակչության: Մարզում առկա էր 107 համայնք, սակայն համայնքների խոշորացման արդյունքում թիվը կրճատվել է և կազմում է 56 համայնք:

ՀՀ Լոռու մարզպետարանը ապահովում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը Լոռու մարզում, համակարգում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Նշված նպատակների իրագործումը ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով վերապահված լիազորությունների շրջանակում ՀՀ Լոռու մարզպետարանը իրականցնում է կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներում գործող ենթակա կազմակերպությունների կառավարման, կրթության, մշակույթի, սպորտի, քաղաքաշինության, ճանապարհաշինության և այլ ոլորտներում պետական պատվերի տեղաբաշխման, սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում միջոցառումների համակարգման ծառայություններ:

Նախորդ միջնաժամկետ ժամանակահատվածում Լոռու մարզը մարզը աչքի է ընկել տնտեսական մի շարք զարգացումներով:

2013-2017թթ. տարիներին, արդյունաբերության բարձր ցուցանիշները պայմանավորված են եղել հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության 9 խոշոր ձեռնարկությունների արտադրական ծավալների աճով: Սակայն 2018թ.-ին «Վալլեքս խմբի ընկերությունների» գործունեության դադարեցման հետ կապված, ոլորտի արդյունաբերական արտադրանքի ծավալները կտրուկ նվազել են 2019թ.-ին արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը կազմելով 36.2 մլրդ դրամ: Մարզում թեթեւ արդյունաբերության բնագավառում գործում են 9 ձեռնարկություններ, որոնց արտադրանքը արտահանվում է: Դրանցից խոշորագույնը «Դարբբագս» ՍՊԸ-ն է:

Արդյունաբերության ոլորտում 2019թ մասնավոր ներդրումների ծավալը կազմել է 6,2 մլրդ դրամ, որից մշակող արդյունաբերությունում այն կազմել է 5,4 մլրդ դրամ:

Հրատապ խնդիրներ են հանդիսանում՝

- գործող կազմակերպությունները, որոնք աշխատում են իրենց հզորության 15-30%, ունեն վերազինման կարիք նոր սարքավորումներով և տեխնիկայով, ինչպես նաև շուկաների բացահայտման
- ներդրումների ներգրավում
- նոր աշխատատեղերի ստեղծումը
- գործազրկության և աղքատության բարձր մակարդակը

Լոռու մարզում գյուղատնտեսության մեջ նոր կամ շարունակական ներդրումների ծավալը 2019թ կազմել է 5,1 մլրդ դրամ: Գյուղատնտեսության բնագավառում նախորդ տարվա համեմատ 2019թ. գրանցվել է աճ ՝

- Ջերմոցային տնտեսությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 1,05 հա-ով կամ 95%-ով և կազմել 2,15 հա:
- Սառնարանային տնտեսությունների հզորությունը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40 տոննայով կամ 10,6%-ով և կազմել 415 տոննա:
- Հակակարկտային ցանցով պատված ինտենսիվ այգիները ավելացել են 0,8 հա-ով կամ 53,3 %-ով և կազմել 2,3 հա:
- Կաթիլային համակարգով ոռոգվող հողատարածքները ավելացել են 21,3 հա-ով կամ 67,6%-ով և կազմել 52,8 հա:
- Ինտենսիվ այգիները ավելացել են 10,9 հա-ով կամ 34,6 %-ով և կազմել 42,4 հա:
- Հակակարկտային կայանքների թիվը ավելացել է 16-ով կամ 39%-ով և կազմել 57:
- Ոռոգվող հողատարածքները ավելացել են 874 հա-ով, փաստացի հնարավոր ոռոգվող շուրջ 2500-ի փոխարեն:

Արդյունքում հրատապ խնդիրներ դեռ շարունակում են մնալ՝

- Ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառության ոչ բավարար մակարդակը
- Գյուղտեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը
- Հակակարկտակայանների ոչ բավարար քանակը
- Ոռոգման ջրի խնդիրը:

2017-2019 թվականներին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կողմից օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորությունների և գործառույթների իրականացման համար ապարատի պահպանմանն ուղղված ֆինանսական միջոցները կազմել են 2017 թվականին՝ 572306.2 հազար դրամ, 2018 թվականին՝ 572049.9 հազար դրամ, 2019 թվականին՝ 638504.7 հազ. դրամ, 2020 թվականի համար նախատեսված է 655586.4հազար դրամ:

Մարզպետարանի կարողությունների զարգացման նպատակով 2019 թվականի պետական բյուջեից հատկացված 3000.0 հազար դրամ գումարը ուղղվել է 10-15 տարի շահագործման ժամկետ ունեցող համակարգչային տեխնիկայի թարմացմանը և գրասենյակային գույքի ձեռքբերմանը: Արդյունքում ձեռք է բերվել համակարգիչներ, սկաներ, պատճենահանման մեքենա և գրասենյակային գույք /աթոռներ, գրասեղաններ, գրապահարաններ և այլն/: ՀՀ Լոռու մարզպետարանում անհրաժեշտություն է առաջացել նաև բարոյապես և ֆիզիկապես մաշված գրասենյակային կահույքի/աթոռներ և գրասեղաններ/ փոխարինումը նոր կահույքով: Մի շարք աշխատասենյակներ ունեն վերանորոգման կարիք, որի համար 2021 թվականի հայտով նախատեսվել են որոշակի գումարներ:

ՀՀ Լոռու մարզպետարանի գլխադասությամբ իրականացվում է 1030 «ՀՀ Լոռու մարզում տարածքային պետական կառավարում» ծրագիրը: Ծրագիրը նպաստում է ՀՀ Լոռու մարզի տարածքում ՀՀ կառավարության կողմից տարածքային քաղաքականության իրականացման, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը: Մնացած ծրագրերով մարզպետարանը գլխադասային չէ, գլխադասային համարվում են ոլորտը սպասարկող նախարարությունները, իսկ մարզպետարանը հանդիսանում է ծրագրի կատարող:

Ստորև ներկայացվում է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ 2021-2023 թթ. ՄԺԾԾ հայտերի /2019թ.՝ փաստացի, 2020թ.՝ սպասվող, 2021-2023թթ.՝ նախատեսվող/

Ծրագիր/Միջոցառման անվանումը	2019թ. փաստացի	2020թ. սպասվող	2021թ նախատեսվող	2021թ.-ը 2020թ.-նկատմամբ	2022 թ	2023թ.
Ծրագիր՝ ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում/1030/, այդ թվում՝	**638504.7**	**655586.4**	**702452.2**	**46865.8**	**710349.1**	**718957.0**
Միջոցառումներ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում/11001/	635,504.8	652,086.4	692,452.8	40366.4	700349.1	708957.0

ՀՀ Լոռու մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում/31001/	2,999.9	3,500.0	5,000.0	1500.0	5000.0	5000.0
ՀՀ Լոռու մարզպետարանի էներգիայի կարիքների այլընտրանքային ապահովում/31002/	0	0	0	5000.0	5000.0	5000.0
Կրթություն	**7056118.6**	**7881148.5**	**8384890.4**	**503741.9**	**9049277.4**	**9676794.8**
Ծրագիր՝ Հանրակրթության ծրագիր/1146/, այդ թվում՝	**7056118.6**	**7881148.5**	**8384890.4**	**503741.9**	**9049277.4**	**9676794.8**
Միջոցառումներ՝ Տարրական ընդհանուր հանրակրթություն/11001/	2494676.6	2794478.4	2701562.7	-92915.7	2910086.2	3068598.3
Հիմնական ընդհանուր հանրակրթություն/11002/	3745656.4	3849268.7	4338873.3	489604.6	4673774.8	5004175.7
Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն/11003/	699102.6	1075572.7	1146117.7	70545.0	1243582.0	1369066.9
Նախադպրոցական կրթություն/110013/	69445.6	80036.4	88026.3	7989.9	105989.0	113020.0
Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում/12002/	2992.0	26152.8	54960.4	28807.6	54960.4	54960.4
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում/12004/	44245.4	55639.5	55350.0	-289.5	60885.0	66973.5
Մշակույթ	**56398.5**	**58162.2**	**58162.2**	**0**	**58162.2**	**58162.2**

Ծրագիր՝ Մշակութային և գեղագիտական դաստիրակության ծրագիր/1198/, այդ թվում՝	**34306.0**	**34539.5**	**34539.5**	**0**	**34539.5**	**34539.5**
Միջոցառում՝ Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում/11005/	34306.0	34539.5	34539.5	0	34539.5	34539.5
Ծրագիր՝ Մարզերի մշակութային զարգացման ծրագիր/1196/, այդ թվում՝	**3971.3**	**3971.3**	**3971.3**	**0**	**3971.3**	**3971.3**
Միջոցառում՝ Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում/11001/	3971.3	3971.3	3971.3	0	3971.3	3971.3
Ծրագիր՝ Մշակութային ժառանգության ծրագիր /1075/, այդ թվում՝	**18121.6**	**19651.4**	**19651.4**	**0**	**19651.4**	**19651.4**
Միջոցառում՝ Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ/11004/	18121.6	19651.4	19651.4	0	19651.4	19651.4
Այլ ծրագրեր	**391019.0**	**432024.0**	**441660.0**	**9636.0**	**451000.0**	**461000**
Ծրագիր՝ Այլընտրանքային աշխատանքային ծառայություն /1110/, այդ թվում՝	**2250.0**	**1470.0**	**660.0**	**-810.1**	**0**	**0**
Միջոցառում՝ Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում	2250.0	1470.0	660.0	-810.1	0	0
Ծրագիր՝ Ճանապարհային ցանցի բարելավում /1049/, այդ թվում՝	**99065.7**	**125562.0**	**135000.0**	**9438.0**	**145000.0**	**155000.0**

Միջոցառում՝ Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ /11002/	99065.7	125562.0	135000.0	9438.0	145000..0	155000.0
Ծրագիր՝ Սոցիալական փաթեթի ապահովում /1015/, այդ թվում՝	**289703.3**	**304992.0**	**306000.0**	**1008.0**	**306000.0**	**306000.0**
Միջոցառում՝ Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում/12001/	289703.3	304992.0	306000.0	1008.0	306000.0	306000.0
Ընդամենը	**8142040.8**	**9026921.1**	**9587164.8**	**560243.7**	**10268788.7**	**10914914.0**

ՀՀ Լոռու մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը հանդիսանում են պարտադիր ծախսեր, քանի որ այն ամրագրված է ՀՀ սահմանդրության 160-րդ հոդվածով և այդ ծախսերը կատարվում են ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման համար:

ՀՀ Լոռու մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում և ՀՀ Լոռու մարզպետարանի էներգիայի կարիքների այլընտրանքային ապահովում միջոցառումների ծախսերը հանդիսանում են հայեցողական ծախսեր:

«ՀՀ Լոռու մարզում տարածքային պետական կառավարում» ծրագիրը շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է իրականացնել երեք միջոցառում, ինչի համար նախատեսվում է 702452.8 հազ. դրամ, այդ թվում՝

- «ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառմանը / 11001/ 2021 թվականին կուղղվի 692452.8 հազար դրամ:
- «ՀՀ Լոռու մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառմանը /31001/ կուղղվի 5000.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել վարչական սարքավորումներ:

- «ՀՀ Լոռու մարզպետարանի էներգիայի կարիքների այլընտրանքային ապահովում » միջոցառմանը /31002/ կուղղվի 5000.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է լիզինգային եղանակով ձեռք բերել արևային էներգիա արտադրելու համար ֆոտովոլտային կայան:

Համաձայն հաստատված հաստիքացուցակի մարզպետարանի աշխատակիցների թիվը նախատեսված է 133, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ՝ 4, բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հայեցողական և քաղաքացիական պաշտոններ՝ 7, քաղաքացիական ծառայողներ՝ 113, տեխնիկական սպասարկում իրականացնող և քաղաքացիական աշխատանք կատարող անձնակազմ՝ 9: Ծառայողական ավտոմեքենաների թվաքանակը 4 է, որից 3-ը հերթապահ ավտոմեքենաներ:

Ստորև ներկայացվում է ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների թվաքանակը ըստ ոլորտների.

Ոլորտի անվանումը	**Կազմակերպությունների քանակը**				
	2018	**2019**	**2020**	**2021**	**2022**
Կրթություն/ՊՈԱԿ-ներ/	**149**	**149**	**149**	**149**	**149**
Առողջապահություն, որից **ՊՈԱԿ-ներ** **ՊՓԲԸ-ներ**	**26** **12** **14**	**26** **12** **14**	**26** **12** **14**	**26** **12** **14**	**26** **12** **14**
Մշակույթ/ՊՈԱԿ/	**1**	**1**	**1**	**1**	**1**
Արտադպրոցական դաստիարակություն	**0**	**0**	**0**	**0**	**0**
Ընդամենը	**202**	**202**	**202**	**202**	**202**

Վերը նշված ծրագրերը և միջոցառումները և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների չափերը քննարկվում են համապատասխան գերատեսչություններում և Ազգային Ժողովի համապատասխան հանձնաժողովներում: Քննարկման արդյունքում չի բացառվում որ կատարվեն որոշակի փոփոխություններ: